# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ

հրատարակվում է 1994 թ.

գինը՝ 150 դրամ

44/4140/ 9 մարտի 2012 ուրբաթ

I SSN 1829-2224

12032



Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am


Ա

## Մշուշոտ գաղափարներ

Առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու են ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն, ՕԵԿ-ը, ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն եւ «Ժառանգությունը» (հավանաբար՝ «Ազատ դեմոկրատների» հետ միասին): Մնացած քաղաքական ուժերը, եթե նույնիսկ մասնակցելու են, ապա ԱԺ-ում հայտնվելու ոչ շանս չունեն, ինչպես նաեւ չունեն դերակատարություն Հայաստանի հասարակական կյանքում: ՆԺԿ առաջնորդ Արամ Կարապետյանը, որպես խելացի մարդ, դա հասկացել է եւ իրավամբ որոշել է բախտը չփորձել: Պետք է ենթադրել, որ Արտաշես Գեղամյանն ու Խոսրով Հարությունյանը նույնքան իրատեսական կգտնվեն եւ կմասնակցեն ընտրություններին ՀՀԿ հովանու ներքո: Բացառված չէ, իհարկե, որ ընտրարշավին կմասնակցեն այլ մանր կուսակցություններ, բայց դա լավագույն դեպքում կլինի քիչ թե շատ հաջողված «բիզնես-նախագիծ»:

Ես շատ կուզենայի, որ սկզբում թվարկած 6 կուսակցություններն էլ հայտնվեն Ազգային ժողովում, ընդ որում՝ մեկը մյուսի նկատմամբ չունենա շատ մեծ առավելություն՝ այդպիսով կարող է ստացվել մի վիճակ, որը գոնե մի քիչ նման է ժողովրդավարական երկրներում առկա «զսպումների եւ հակակշիռների» մեխանիզմին: Ճիշտ է, մեր իրականությունն այնպիսին է, որ դժվար թե առաջիկա խորհրդարանական ընտրությունները նման համակարգի համար նախադրյալներ ստեղծեն:

«Դասական» վիճակից մեզ տարբերում է այն, որ հիշյալ 6 կուսակցություններից 4-ի գաղափարախոսությունը շատերիս համար մշուշի մեջ է: ՀՀԿ-ն ասում է, որ նա ազգային պահպանողական է, նժդեհական, տարոնական եւ ցեղակրոն: Ինչ մեղքս թաքցնեմ, ես չեմ հասկանում, թե ինչ է դա նշանակում: Հավանաբար, դիմեմ Ալրաղացի Լյովին կամ Նավոյին, որ ինձ բացատրեն: Նժդեհն, իհարկե, ազգային հերոս է եւ մի շարք ուշագրավ հրապարակախոսական հոդվածների հեղինակ: Բայց թե ինչ պիտի անեմ ես, որպեսզի «ցեղվեմ», ինչ է ենթադրում այդ գործողությունը՝ ես չգիտեմ:

Քիչ թե շատ պարզ է, թե որ ուղղությամբ են ուզում տանել երկիրը Դաշնակցությունն ու «Ժառանգությունը»: Մնացածը գերադասում են իրենց դավանած գաղափարների մասին խոսել առավել ընդհանուր խոսքերով: Մասնավորապես, ՀԱԿ-ն ասում է՝ քանի որ ներկայիս Հայաստանում բռնապետական ռեժիմ է, բացարձակապես նշանակություն չունի, թե ով ինչ գաղափարախոսություն է դավանում: Երբ ՀԱԿ-ը կգա իշխանության, կհաստատի ժողովրդավարություն, լեգիտիմություն եւ սահմանադրական կարգ, եւ ահա դրանից հետո միայն հնարավոր կլինի խոսել գաղափարախոսությունների մասին: Իսկ նրանք, ովքեր չեն հավատում, որ ՀԱԿ-ն ի վիճակի է եւ, ամենակարեւորը՝ մտադիր է այդ ամենն անել, նա սրիկա է եւ տականք: Դա հիշեցնում է խորհրդային շրջանի կատակը՝ «այնպիսի խաղաղություն կհաստատենք ամբողջ աշխարհում, որ քարը քարին չի մնա»:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## Մեծ Բրիտանիայի դեսպանը՝ հայաստանյան իրականության մասին

Երեկ «Առավոտը» ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան Քեթրին Լիչից, որը գտնվում էր Գյումրիում՝ Բրիտանական շաբաթվա բացման կապակցությամբ, հետաքրքրվեց, թե դիվանագետի դիտարկմամբ՝ ինչպիսի՞ն էին մի ամիս առաջ Հայաստանի տարբեր շրջաններում տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունները: «Իմ կարծիքով՝ դրական փոփոխություններ, անշուշտ, նկատվում են, օրինակ՝ Հրազդանում կային երկու ուժեղ թեկնածուներ, երկուսի կողմից էլ ուժեղ քարոզարշավ էր իրականացվում: Բայց նաեւ պետք է նշեմ, որ մենք ստացանք զեկույցներ, որոնք փաստում են այն մասին, որ եղել են թերություններ՝ տեղի է ունեցել ձայնի գնում, ընտրակաշառքների բաժանում, ադմինիստրատիվ գործողությունները ճիշտ չեն իրականացվել... սակայն, կարծում եմ, որ այս ամենից դաս կքաղվի, եւ առաջիկա ընտրությունները առավել ժողովրդավար ձեւով կանցկացվեն»,- ասաց տիկին Լիչը:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ



### ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

#### Զուգահեռ՝ այո, միասնաբար՝ ոչ

«ՀԱԿ-ը ղեկավարող անձն է ամենամեծ խոչընդոտողը, որպեսզի մենք միանշանակ ասեինք՝ այո, պատրաստ ենք համագործակցել անգամ այդ անձեղ հարցի շուրջ: Կարող ենք զուգահեռ ճանապարհներով գնալ, բայց միասնաբար՝ դժվար թե»,- «Առավոտի» հարցին՝ ՀԱԿ-ը հայտարարել է, որ պատրաստ է ընտրակեղծիքների դեմն առնելու համար համագործակցել ցանկացած ուժի հետ, գոնե այդ հարցի շուրջ Դեմկուսը ՀԱԿ-ի հետ համագործակցության եզր տեսնո՞ւմ է, ասաց ՀԴԿ նախագահ Արամ Սարգսյանը:

Կարդացեք էջ 2:

#### Իշխանությունները քաղաքական կամք չունեն

«Մի կողմից՝ հստակ է, որ ընտրությունների կեղծումը շատ ծանր հետեւանքներ է ունենալու թե պետության, թե կեղծողների համար, մյուս կողմից՝ այն, ինչ արվում է պետության ներսում նախընտրական այս փուլում, խոսում է այն մասին, որ բացակայում է իշխանությունների քաղաքական կամքը մաքուր եւ արդար ընտրություններ անցկացնելու համար»,- երեկ «Առավոտի» հետ զրույցում հայտարարեց «Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ Ռուբեն Հակոբյանը:

Կարդացեք էջ 3:

#### Ընտրությունները՝ օրենքի տառին համապատասխան

«Արդար ընտրությունների անցկացումը եւ կազմակերպումը մեկ հոգու գործ չէ եւ անգամ մեկ կուսակցության գործ չէ, դա հասարակության գործն է, եւ հասարակության բոլոր այն անդամները, ովքեր իսկապես ոչ միայն իրենց, այլեւ յուրաքանչյուր քաղաքացու ձայնին են տեր կանգնելու, նրանք բոլորը պետք է համախմբվեն, եւ այստեղ պետք չէ ասել, թե Դաշնակցությունն ինչ է անում, «Ժառանգությունն» ինչ է անում. այստեղ բոլորս պիտի համախմբվենք, բոլորս պիտի տարբեր ոլորտներում, տարբեր ուղղություններում աշխատենք, որպեսզի ընտրությունները չկեղծվեն եւ մարդկանց քվեն տեղ հասնի: Վստահված անձինք, իհարկե, պիտի լինեն շատ հավատարիմ, նաեւ հանձնաժողովներում ընդգրկված լինեն շատ հավատարիմ մարդիկ: Իհարկե, հետեւելու ենք, ինքներս էլ օրենքի տառին համապատասխան կազմակերպելու ենք ընտրությունները»,- «Առավոտի» հետ զրույցում ասաց «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Անահիտ Բախշյանը:

Կարդացեք էջ 3:

### ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

#### Ծանուցում

Առավոտի հաջորդ համարը լույս կտեսնի մարտի 13 ին:

#### Եղանակ

Երեւան -4 +8, Շիրակ -13 +4, Կոտայք -13 +4, Գեղարքունիք -13 +4, Լոռի -9 +8, Տավուշ -4 +12, Արագածոտն լեռներ -13 +4, Արագածոտն նախալեռն. -6 +8, Արարատ -4 +9, Արմավիր -4 +9, Վայոց Ձոր լեռներ -13 +4, Վայոց Ձոր նախալեռն. -4 +9, Սյունիքի հովիտներ -2 +14, Սյունիքի նախալեռներ -6 +7, Արցախ -3 +10

Առավոտ
a r a v o t d a i l y
ՈՒՐԲԱԹ 09.03.2012



## ՄՈՒՏՔԸ՝ ՆԵՐՍԻ ԿՈՂՄԻՑ

### Բացակա վրձինը



Գիշերը տարօրինակ երազ տեսա, եւ երազիս մեջ իբրեւ թե ես նկարիչ եմ եւ իմ կտավները տարել ու ցույց եմ տալիս Լեոնարդոյին: Ու նա ուշադիր հերթականությամբ նայելով իմ կտավները՝ խորհուրդ է տալիս, նայում ու ասում է ինձ.

- Լույսը երբեք չի վերջանում այնտեղ, երբ սկսվում է մութը կամ խավարը: Սեւն ու սպիտակը միշտ իրար հետ են, եւ չկա ոչ մի սահման, որ նրանց բաժանի իրարից, ինչպես որ բաժանման սահման չկա Աստծո եւ սատանայի միջեւ,- նա խոսում էր, գրեթե ուշադրություն չդարձնելով ինձ, բայց շարունակ նայելով իմ նկարներին եւ ձեռքով մորուքը շոյելով ասում էր.

- Քո սխալն այն է, որ մտածում ես, թե կտավը հարթ է, այնինչ դա բոլորովին էլ այդպես չէ, եւ դրա համար էլ քո նկարած դեմքերը ծեփված են մակերեսին եւ ինձ հետ չեն խոսում: Որովհետեւ եթե նկարիչը ներկայացնում է մեկին՝ կտավը ընդամենը ֆոն է, միջոց, իսկ այդ մեկը՝ ում նկարել ես, պիտի կենդանի դուրս գա կտավից, եւ քո նկարը նայողը կտավը չպիտի տեսնի, պիտի տեսնի նրան, ում դու նկարել ես,- հետո նա վերցրեց վրձինը եւ ինչ-որ բան ուղղեց իմ նկարած կանացի դեմքին, այնուհետեւ հեռացավ՝ հեռվից նայեց, մոտեցավ. դարձյալ երկար նայեց եւ վրձինը դիրիժորի փայտիկի նման ճոճելով շարունակեց,- այ, հիմա դու այս կնոջը այլեւս երբեք չես մոռանա, քանի որ դու այսու շարունակ անհանգիստ կլինես նրա բախտի եւ ոչ թե քո կտավի ճակատագրի համար... Հիշիր, որ կտավն ընդամենը միջոց է, որը քեզ հնարավորություն տվեց ճանաչելու այդ կնոջը... Ես լուռ լսում էի Վարպետին եւ երազիս մեջ ինձ բախտավոր էի համարում, որ հանդիպել եմ Նրան:

- Ձեր բախտը չբերեց, որ ապրում եք Ձկան եւ Ջրհոսի համաստեղության արանքում, թեեւ նրանք ընդամենը իրար շարունակող են,- առաջին անգամ նայելով ինձ՝ ասաց Վարպետը, եւ ես տեսա, որ նրա աչքերը կանաչ են,- դուք ամեն օր տագնապով սպասում եք փոփոխությունների եւ մոռանում եք այն, ինչը հաստատուն է...

Հեռախոսի ձայնից արթնացա: Եվ երբ տաք երազի ծվենները իմ մեջ՝ սուրճը ձեռքիս, մոտեցա պատուհանին՝ զարմանքով տեսա, որ գիշերով, մարդու աչքից թաքուն, դիմացի մայթեզրի կանաչ խոտը ծիլ էր տվել: Գարուն էր գալիս:

ՄԵՐՈՒԺԱՆ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

# Ակադեմիկոս Լեւոն Աղալովյանը՝ Դեմկուսի ցուցակի երկրորդ համարն է

## ՀԴԿ-ն կմասնակցի ընտրություններին՝ համամասնական ընտրակարգով

Հայաստանի դեմոկրատական կուսակցության հանրապետական խորհրդի ընդլայնված նիստում որոշում է կայացվել, որ մասնակցելու են խորհրդարանական ընտրություններին՝ համամասնական ընտրակարգով: Երեկ այդ մասին «Առավոտի» հետ զրույցում տեղեկացրեց ՀԴԿ նախագահ Արամ Սարգսյանը՝ հավելելով, որ համամասնական ցուցակը լինելու է կուսակցության անդամների եւ անկուսակցականների միավորում, մարդկանց, ովքեր ՀԴԿ-ի համակիրներն են: Դեմկուսի ցուցակը հիմնականում արդեն ձեւավորված է:



- Ովքե՞ր են լինելու ցուցակի անկուսակցական հայտնի մարդիկ:

- Դեմկուսի ցուցակի երկրորդ համարը լինելու է ակադեմիկոս Լեւոն Աղալովյանը: Մեր ցուցակում է լինելու նաեւ Հայաստանում ասորիների համայնքի ղեկավար Իրինա Գասպարյանը:

- Չե՞ք վախենում, որ մրցակցության մեջ եք մտնում «շնաձկների» հետ: Արդեն իսկ ակնհայտ է, որ այս ընտրություններում էլ էական դեր է խաղալու ֆինանսական ռեսուրսը: Դեմկուսն այդքան փող ունի՞:

- Վախը քաղաքական կյանքում չեմ ընկալում: Եթե վախենայի, 20 տարի քաղաքականության մեջ չէի լինի: Եթե վախեցող լինեի, շատ առիթներ եղել են...Ինչ մնում է ֆինանսական ռեսուրսի գործոնին՝ մենք ինքներս բազմիցս նշել ենք, որ այսօր դա խոչընդոտ է դարձել, որպեսզի ընտրությունները քիչ թե շատ արդար անցնեն: Բայց այստեղ մի կարեւորագույն խնդիր կա. եթե հիշում եք, երկու-երեք շաբաթ առաջ Դեմկուսի նախաձեռնությամբ մտավորականության ներկայացուցիչները՝ 35 բավական հայտնի անձնավորություններ, ՀՀ քաղաքացիներին ուղղված դիմում ստորագրեցին, որով կոչ էին անում, որպեսզի առաջիկա խորհրդարանական ընտրություններում մարդիկ գոնե մեկ անգամ ինքնուրույն որոշում կայացնեն եւ չենթարկվեն ճնշումներին ու գայթակղություններին: Որքանո՞վ կներազդեն ժողովրդի վրա այս կոչը եւ մեր մնացած քայլերը՝ դժվար է ասել, բայց մենք եւս մեկ անգամ ուզում ենք օրինակ ծառայել՝ ցույց տալով, որ մենք կաշառք չենք տալու, մենք ներկայացնելու ենք գաղափարական ծրագիր, ներկայացնելու ենք հստակ ծրագիր, որը ոչ թե կոսմետիկ փոփոխություններ է ենթադրում, այլ համակարգային: Մենք ուզում ենք, որպեսզի մարդիկ ընտրություն կատարեն ծրագրերի միջեւ: Որքանո՞վ կստացվի՝ այլ հարց է, բայց գիտեմ, որ մեր հասարակության 25-30 տոկոսն ինքնուրույն որոշում կայացնողներ են: Կարծում եմ, որ այդ մարդկանց բացարձակ մեծամասնությունը կարող է քվեարկել ՀԴԿ-ի օգտին, որովհետեւ մենք միակն ենք, որ ներկայացնելու ենք այլընտրանքային ծրագիր: Մյուս մասնակից կուսակցությունները կամ շատ ազատական գաղափարախոսության կրող են, կամ այսօրվա «բազարային» հարաբերությունները պաշտպանող: Մենք ներկայացնելու ենք սոցիալ-դեմոկրատական ծրագիր, որի մանրամասները 10-15 օրվա ընթացքում պարզ կլինեն:

Այո, մենք շատ լավ հասկանում ենք եւ գիտենք, որ արդեն սկսվել են մարդկանցից անձնագրեր հավաքելու դեպքերը, գրի են առնում տվյալները՝ խոստանալով փող, ձեթ կամ պաշտոն: Թեեւ այդ խոստումները մեծամասամբ չեն կատարվում՝ ժողովուրդը գայթակղված է, կարող է որոշ չափով գնալ այդ ճանապարհով, բայց եթե դրա հետ հաշվի նստենք ու չգնանք ընտրությունների՝ միանգամից տանուլ տված կլինենք: Այսպես գոնե կպայքարենք: Ինչո՞ւ ոչ՝ հուսադրող է նաեւ այն, որ հիմա մեր կուսակցության շուրջ հավաքագրված են մեծ թվով մտավորականներ, երիտասարդներ, կանայք. հիմք ունենք ասելու, որ մեր նպատակին կարելի է հասնել:

- Հնչակյանների եւ ՀՅԴ-ի հետ բանակցությունների մեջ էիք. ի՞նչ պատճառով ընդհանուր հայտարարի չեկաք:

- Դաշնակցության հետ այդպիսի կոնկրետ բանակցություններ չենք վարել: Հնչակյանների հետ ենք բանակցություններ վարել, համատեղ մի համաժողով էլ անցկացրինք: Բայց որ դաշինք չկայացավ՝ պատճառը մենք չենք, իրենք են: Որքան ես գիտեմ՝ Հնչակյանները հրաժարվել են ընտրություններին մասնակցել: Պարզ է, որ մենք պետք է գնայինք մեր ճանապարհով: Մանավանդ, որ գտնում ենք՝ եթե բաց դեբատներ կազմակերպվեն՝ մենք միանշանակ հաղթող ենք դուրս գալու: Ովքեր կասկածում են՝ ես նրանց հրավիրում եմ բանավեճի:

- ՆԺԿ նախագահը երեկ մեր թերթին տված հարցազրույցում ասել էր, որ պետք է հրաժարվել ընտրություններին մասնակցելուց եւ նախապատրաստվել հետընտրական զարգացումներին: Նա նաեւ ակնարկել էր, որ այդպիսի գործընթաց արդեն կա: Դա ճի՞շտ եք համարում:

- Ես ծանոթ չեմ այդ մտահղացումներին, բայց, մյուս կողմից, չեմ կարողանում հասկանալ՝ եթե ընտրություններն անցնեն, ի՞նչ նոր գործողություններ պետք է առաջարկենք: Նոր մարտիմեկյա՞ն, հեղափոխակա՞ն: Եթե դա է իմաստը՝ ես չեմ կիսում այդպիսի տրամադրությունները: Այլ հարց է, որ մենք պայքարենք հիմա, կարողանանք հնարավորինս պաշտպանել մեր եւ մեր ժողովրդի շահերը: Եթե ցանկություն կա՝ եկեք միավորված գնանք ու ժողովրդի հետ փորձենք այնպիսի ընտրություններ իրականացնել, որոնք ինչ-որ բան կփոխեն: Իսկ եթե ընտրություններն ավարտվեցին, ժողովուրդը հայտնի խոսքն է ասելու. «Ճաշից հետո մանանեխ պետք չէ»:

Շատ ճիշտ կլիներ նաեւ, որ բոլորը միասնաբար հանդես գային քաղաքական գովազդի խայտառակ գների դեմ՝ մեկ րոպեն 118-120 հազար դրամ: Դա եւ ընտրագրավն արդեն իսկ անհավասար պայմաններ են ապահովում: Նշանակում է, որ ամեն ինչ արվում է արհեստականորեն սահմանափակելու ընտրություններին մասնակցող ուժերի քանակը: Սրանք հարցեր են, որ բոլորը միասնաբար պետք է պայքարեին, բայց մի կողմ քաշվել, նստել եւ տեսնել, թե ընտրություններն ինչպես են անցնելու... Իսկ եթե չկարողանա՞նք հաստատել, որ կեղծիքներ են արել: Ի միջի այլոց, հնարավոր է, որ բացահայտ կեղծիքներ չանեն: Հիմա՝ այս փուլում, գնեն մարդկանց ձայները, ադմինիստրատիվ ռեսուրսով պարտադրեն եւ այլն՝ ո՞նց ենք հաստատելու: Հրազդանի օրինակը դա ցույց տվեց:

Եթե մենք կարողանանք այս ընտրություններում որակական փոփոխություն մտցնել ժողովրդի այն հատվածի մասով, որը ինքնուրույն է ընտրության գնում՝ դա արդեն լուրջ բան կլինի: Եթե կարողանանք մարդկանց հավատ ներշնչել եւ միասնաբար դա անել՝ ավելի լավ:

Զրույցը՝ ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

# Մարտի 8-ը՝ Մաշտոցի պուրակում եւ քրդերի ցույցը՝ Շահումյան հրապարակում

Մաշտոցի այգում ակտիվիստները բանաստեղծություններով ու թմբուկներով երեկ նշեցին Մարտի 8-ը: Նախքան տոնակատարությունը, մի խումբ ակտիվիստներ «Ապամոնտաժեք» ցուցապաստառով գնացին քաղաքապետարանի աշխատակիցներին ընդառաջ, որոնք այսօր փողոցում ծաղիկներ էին բաժանում կանանց:

Տոնակատարության հիմնական բանախոսները գրող, հրապարակախոս Մարինե Պետրոսյանն ու Զարուհի Հովհաննիսյանն էին: Նրանք կոչ էին անում կանանց ավելի ակտիվ ներգրավվել հասարակական միջոցառումներին ու ակցիաներին: *«Հայաստանում փոփոխությունների փորձերը հաջողությամբ չեն պսակվում, բայց կանայք ինչքան ակտիվ մասնակցեն, ավելի լավ կլինի, որովհետեւ նրանք փոփոխություններ առաջացնելու ավելի մեծ շանսեր ունեն, քան տղամարդիկ»*,- նման կարծիք հայտնեց Մ. Պետրոսյանը: Զ. Հովհաննիսյանն էլ հավելեց, որ Մարտի 8-ը հեղափոխության ու չհարմարվող կնոջ օրն է, որը միշտ էլ ցանկացած պայքարում հաջողությունների է հասնում:

Մեկ այլ հրապարակային միջոցառում էլ երեկ տեղի էր ունենում Շահումյան հրապարակում, որտեղ բողոքի ակցիա էին կազմակերպել քուրդ համայնքի ներկայացուցիչները՝ ընդդեմ քրդուհիների դեմ բռնության: *«Այսօր աշխարհի բոլոր կանանց համար տոն է, բայց մեր՝ քուրդ կանանց համար՝ կարամ ասեմ, սուգ է»*,- ասում էին նրանք: Ցուցարարները ծեծված, բռնության ենթարկված քուրդ կանանց լուսանկարներով պաստառներ էին ցուցադրում անցորդներին, երգում, պարում ազգային պարեր ու հրավիրում անցորդների ուշադրությունը:

Ակցիայի ակտիվիստ Զարիֆ Քալաշյանի խոսքերով՝ *«Հայաստանում մեր կանայք ազատ ապրում են: Խոսքը Թուրքիայի մասին է, մեր կանայք ճնշված են այնտեղ: Այստեղ մենք սովորում ենք, մեր դպրոցը, մեր լեզուն ունենք, խոսում ենք: Մենք քայլում ենք փողոցներում ու բարձրաձայն խոսում, բայց այնտեղ՝ չէ՛: Իրենք նայում են իրենց կողքերը, փակում են դռները, որ հանկարծ մեկը չլսի»:* Տիկին Զարիֆը նաեւ ասում էր, որ այս ակցիայով իրենք պահանջում են ազատություն նաեւ իրենց պատգամավորների համար. *«Ազատություն ենք ուզում, իհարկե, մեր Օջալանի համար էլ, քանզի Օջալանը մեր կանանց ազատություն է բերել: Մեր հավաքվելու բուն իմաստն ու նպատակը դա է»:* Ցույցի մասնակիցները հիմնականում կանայք էին: Նրանք վստահեցնում էին, որ քուրդ տղամարդիկ կնամեծար են: Մեր հարցին՝ չե՞ն շահագործում նրանք կանանց՝ տիկին Զարիֆը վստահեցրեց, որ *«մեր մոտ այդ բանը չկա, քանզի մենք Օջալանի ուղիով ենք գնում, բռնություն չի լինում: Առավոտ ես հելել եմ, ասել եմ՝ պիտի գնամ միտինգի՝ թույլ տվել է: Իմ ամուսինը միշտ ինձ թույլ է տվել: Ես ժողովների էլ եմ մասնակցել, ամեն տեղ էլ եղել եմ»:*

Համայնքի ներկայացուցիչ Վրաս Խումոյանի մեկնաբանությամբ՝ քուրդ կանանց իրավունքները ռուսների եւ հայերի համեմատ ավելի շատ են ոտնահարվում. *«Քուրդ կանանց աքերը փակ են, աչքաբաց չեն, տանջված ժողովուրդ են, իրենց մաղթում եմ ազատություն»:* Մեր հարցին՝ ձեզ համար ընդունելի՞ է ռուսների ազատությունը՝ նա պատասխանեց. *«Դե, օրինակ, բազմակնությունն ընդունելի չէ, մենք դա չենք ընդունի, դա ամոթի խնդիր է, չենք կարող նմանվել Եվրոպային: Աստված կնոջն ասել է՝ վերեւը ես եմ, ներքեւը՝ քո ամուսինը, պիտի հնազանդ լինես: Օրինակ, ծխեն էլ են չի, չնայած որ տատս ծխում է»:*

ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ

Առավոտ
aravot daily
ՈՒՐԲԱԹ 09.03.2012

# Սերժ Սարգսյանի խոստումներն ու իրականությունը տարբեր են

## Ռուբեն Հակոբյանը հույս ունի, որ Սերժ Սարգսյանը գիտակցում է

Նախագահ Սերժ Սարգսյանն օրերս Բելգիայի Թագավորություն կատարած աշխատանքային այցի շրջանակներում եվրոպական կառույցների պաշտոնյաների հետ հանդիպումներում խոսելով Հայաստանում անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների մասին՝ հայտարարեց, թե ՀՀ իշխանությունները վճռական են ընտրությունները կազմակերպել եւ անցկացնել միջազգային չափանիշներին համապատասխան:

Բայց արդյոք սա ընդամենը խոստում չէ՞, եւ արդյոք ՀՀ իշխանությունները՝ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ, իսկապե՞ս քաղաքական կամք ունեն եվրոպական չափանիշներին համապատասխան ընտրություններ կազմակերպելու: «Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ Ռուբեն Հակոբյանը «Առավոտի» այս հարցադրմանն արձագանքելով՝ ասաց. «Բավականին ժամանակ է, որ եվրոպական ամենատարբեր ամբիոններում, նաեւ ԵԽԿ-ում դիտորդի անդամի կարգավիճակ ստանալիս, Սերժ Սարգսյանը շատ կատեգորիկ հայտարարում է այդ մասին, եւ ես ենթադրում եմ, որ դրանք հայտարարություններ են, որոնցով նա իր վրա լուրջ պատասխանատվություն է վերցնում: Իշխանական ուժը՝ այդ կոալիցիա կոչվածը, գիտենք, որ Հայաստանում, ըստ էության, ֆոն է մեկ անձի իշխանությունը ապահովելու համար, իսկ այդ մեկ անձը միշտ ՀՀ նախագահն է. այդպես է եղել այս 20 տարիների ընթացքում: Իհարկե, այն, ինչ Հայաստանում արվում է փաստացի, եւ ինչ հայտարարվում է դե յուրե՝ հատկապես եվրոպական ամբիոններից, խորը հակասությունների մեջ են, եւ ես չեմ տեսնում, որ Հայաստանում իսկապես հնարավոր է իրականացնել այն, ինչի մասին Սերժ Սարգսյանը հայտարարում է»: «Ժառանգության» ներկայացուցիչն իր այս դիտարկումը փաստարկեց կոնկրետ օրինակներով՝ Ընտրական օրենսգրքի ընդունման հետ կապված խորհրդարանական բուռն բանավեճերը, 41 մեծամասնական տեղերի հետ կապված խնդիրը, որը Ռուբեն Հակոբյանի մատուցմամբ՝ «քաղաքական դոպինգ է իշխանության համար խորհրդարանում 41 ավելի տեղ ունենալու նպատակով», նաեւ քվեարկողների ցուցակների հրապարակայնության առնչությամբ ընդդիմության դեմ իշխանությունների ծավալած «դաժան պատերազմը», որով վերջիններս հասան այն բանին, որ քվեարկողների ցուցակները չհրապարակայնացվեն, «որովհետեւ 600-800 հազար ընտրողներ բացակայում են Հայաստանից, եւ հիմնական լցոնումները, որոնք հասնում են մի քանի հարյուր հազարի, կատարվում են հենց այս բացակայող քաղաքացիների հաշվին: Երեւի հիշում եք, որ անցած ընտրություններում եղան տեղամասեր, որտեղ ընտրություններին մասնակցել էր ընտրողների մինչեւ անգամ 140%-ը»: «Ուրախ կլինեմ, եթե սխալված լինեմ, բայց գործնականում չեմ տեսնում, թե ռեալ քաղաքական կամք կա արդար ընտրություններ անցկացնելու համար: Ցավոք, պետք է արձանագրեմ, որ այս 18-20 տարիների ընթացքում մշտապես իշխանության շահը խորը հակասության մեջ է եղել ազգի եւ պետության շահի հետ, եւ, ցավոք, ավանդաբար այդ հակասությունը լուծվել է ի շահ իշխանության: Բացի այդ, Սերժ Սարգսյանի թիմում, որտեղ խոսում են ընտրությունների մասին, եւ որոնց հետ նաեւ տարբեր առիթներով բախտ եմ ունեցել բանավիճելու, տեսնում եմ, որ բացարձակապես նորմալ ընտրություններ կազմակերպելու կամքը չկա»,- հավելեց Ռուբեն Հակոբյանը:




Բայց արդյոք Սերժ Սարգսյանը չի՞ հասկանում, որ պատասխանատու է լինելու եվրոպական կառույցների պատասխանատուների առաջ արած իր հայտարարությունների համար: «Ես ուզում եմ հավատալ, որ հասկանում է, պատասխանատվություն զգում է, եւ կարծում եմ՝ պիտի զգա, որովհետեւ ամենատարբեր առիթներով, ամենաբարձր ամբիոններում գրեթե նույն ձեւակերպումներով, գրեթե նույն շարադասությամբ Եվրոպային, աշխարհի քաղաքակրթությանը համոզում է, որ ինքը բացառիկ ընտրություններ է անցկացնելու: Ուղղակի այն, ինչի մասին Սերժ Սարգսյանն ասում է դրսում, իսկ ես կարծում եմ՝ անկեղծորեն է ասում, մեր երկրում ընթացող պրոցեսների հետ սարուձորի տարբերություն է»,- ասաց «Ժառանգության» փոխնախագահը:

Շատ են դիտարկումները, թե առաջիկա համապետական ընտրությունները նման են լինելու Հրազդանի քաղաքապետի ընտրություններին, որտեղ իշխանությունների կողմից ուժի ոչ մի ցուցադրություն, լցոնում տեղի չունեցավ, բայց հաղթանակ տարավ իշխանությունն ու նրա թեկնածուն, որովհետեւ այն, ինչ արվել էր ընտրությունների արդյունքը կեղծելու համար՝ արվել էր ընտրական տեղամասերից դուրս: Արդյոք հենց այդպիսի ընտրությունների անցկացումը չէ՞, որ կբավարարի ե՛ւ Արեւմուտքին, ե՛ւ ՀՀ իշխանությանը: «Անկախ այն բանից, թե Արեւմուտքին ինչ է ասվում՝ հետագայում պարզվում է, որ ամեն տեսակի ընտրություն էլ Արեւմուտքին բավարարելու է: Մեր ողբերգությունն է, որ երբեմն մտածում ենք, թե Արեւմուտքը կգա ու մեզ կփրկի: Հակառակը՝ մի բան պետք է ֆիքսենք. Արեւմուտքը մշտապես կարողացել է օգտվել մեր ոչ լեգիտիմությունից, մեր ընտրությունների մակարդակից եւ կարողացել է, շահարկելով ընտրությունների որակը, իր շահերը պարտադրել մեզ: Այնպես որ՝ եկեք շատ չշեշտենք, թե Արեւմուտքը կգա, այս կասի, այն կանի: Ես դրան շատ թեթեւ, մատների արանքով եմ նայում: Բայց մեկ ուրիշ բան կա. կարծում եմ՝ հասարակությունը արդեն սպառել է կեղծարարին ներելու լիմիտը, իշխանությունն էլ սպառել է իր սխալվելու իրավունքը»,- շեշտեց Ռ. Հակոբյանը:

Իրականությունը, սակայն, այն է, որ ավելի քան 15 տարի անընդհատ ասվում է, որ իշխանությունը կեղծարարության իր ռեսուրսը սպառել է, որ հասարակությունն այլեւս չի ների, բայց 15 տարի է՝ իշխանությունները գտնում են կեղծելու եւ անպատիժ մնալու ռեսուրսը, ինչի մասին վկայեցին նաեւ Հրազդանի ընտրությունները: «Իմ գնահատմամբ՝ Հրազդանի ընտրություններում, անկախ այն բանից, թե ինչ արձանագրվեց, եւ եթե անգամ ճիշտ են պաշտոնապես հրապարակված արդյունքները, իշխանությունը պարտվեց, հաղթեց վարչական ռեսուրսը, եւ միայն: Խոսքը թվերի մասին չէ: Եվ եթե իշխանությունն այս ռեսուրսով է գալիս ընտրությունների՝ չեմ կարծում, թե նա հաղթանակ կտոնի: Երկրորդ՝ անցած 20 տարիների ընթացքում մեր պետության ուսերին դրվեց մի մե՜ծ բեռ, ահռելի բեռ: Եվ այդ բեռն արդեն այնքան ծանր է, իսկ դա ոչ թե 4 կամ 8 տարվա, այլ 22 տարվա բեռ է, որն իսկապես խորտակում է այն նավը, որն այսօր վարում է Սերժ Սարգսյանը, եւ ստացվում է այնպես, որ նա պատասխան է տալու ոչ միայն այս 4 կամ 8, այլ անցած ամբողջ 22 տարիների համար: Այս ընթացքում է, որ արտակարգ վիճակ է մեր երկրում, սոցիալական այս ծանրագույն վիճակը անցած տարիների քաղաքականության արդյունքն է, եւ սա նկատի առնելով եմ ասում, որ արդեն սպառվել է իշխանության սխալվելու իրավունքը, եւ ժողովուրդն այս 22 տարվա ընթացքում սպառել է ներելու պաշարը: Ենթադրում եմ, որ Սերժ Սարգսյանը գիտակցում է դա, եթե չի գիտակցում՝ լավ չի: Նաեւ կարծում եմ, որ, այնուամենայնիվ, նա գիտակցում է՝ սրանք ճակատագրական, պատմական ընտրություններ են լինելու»,- հայտարարեց «Ժառանգության» ներկայացուցիչը:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# Մենք խորապես գիտակցո՞ւմ ենք

## Քաղաքական ուժերն ուզում են, սակայն առանձնապես չեն հավատում, թե հնարավոր է անցկացնել իրոք արդար եւ ժողովրդավարական չափանիշներին համապատասխան ընտրություններ:

Արդեն տեղեկացրել էինք, որ այս շաբաթվա սկզբում Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանի եւ Եվրահանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզոյի միջեւ կայացած հանդիպմանը քննարկվել են նաեւ Հայաստանի առաջիկա խորհրդարանական ընտրություններին առնչվող հարցեր: Մանուել Բարոզոյի հետ հանդիպումից հետո կայացած համատեղ ասուլիսում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, մասնավորապես, ասել է. «Ես վերահաստատեցի հայկական կողմի հանձնառությունը՝ ընտրական գործընթացները կազմակերպել եւ անցկացնել միջազգային չափանիշներին համապատասխան: Մենք խորապես գիտակցում ենք ազատ, արդար եւ ժողովրդավարական ընտրությունների անցկացման կարեւորությունը մեր երկրի հետագա զարգացման համար»: Խոսվել է նաեւ Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների մասին, եւ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը նշել է. «Մենք վճռական ենք Հայաստանում խորքային եւ համակողմանի բարեփոխումները շարունակելու հարցում եւ մեր երկրում իրականացվող բարեփոխումները դիտարկում ենք նաեւ որպես Եվրամիության հետ ծավալվող համագործակցության կարեւոր մաս: Մենք ողջունել եւ կիսում ենք Եվրոպական միության՝ «ավելի շատ աջակցություն՝ ավելի շատ բարեփոխումների դիմաց» սկզբունքը»:

Եվրահանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզոն էլ իր հերթին ասել է. «Իմ խոսքը նախագահին շատ հստակ էր՝ մենք ամբողջովին սատարում ենք նախագահի բարեփոխումների եւ արդիականացման օրակարգը եւ հավատարիմ ենք մնում՝ խորացնելու մեր ներգրավվածությունը Հայաստանի հետ Արեւելյան գործընկերության շրջանակներում: Ես ուրախ եմ ասել, որ բարեփոխումները լավ առաջընթաց են արձանագրում»:

Եվրահանձնաժողովի նախագահը նաեւ շեշտել էր, որ Հայաստանի համար շատ կարեւոր փուլ է համարում խորհրդարանական, այնուհետեւ՝ նախագահական ընտրությունները:

Երեկ մենք փորձեցինք մեկնաբանություններ ստանալ այս հանդիպումների մասին: «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Անահիտ Բախշյանը, ով մեզ հետ հեռախոսային զրույցի պահին գտնվում էր Մաշտոցի պուրակում՝ ակցիայի մասնակիցների շրջապատում, ժամանակ գտավ՝ թեպետ օրը տոնական էր, եւ պատասխանեց մեր հարցերին: Անահիտ Բախշյանը հայտնեց, որ ինքը շատ կուզեր հավատալ, որ հենց այդպես էլ կլինի, եւ ի վերջո հնարավոր կդառնա մեզանում եւս արդար, ազատ եւ եվրոպական չափանիշներին համապատասխանող ընտրությունների անցկացումը. «Տարբեր ժամանակներում, տարբեր տեղերում նույն խոստումը հնչել է, գիտեք, շատ եմ ուզում հավատալ, բայց իրականությունը եւ այն նախադրյալները, որ պետք է ապահովեին նման ընտրությունները, չկան: Չկան այն պայմանները, որոնց առկայության դեպքում հնարավոր կլինեին նման ընտրությունները: Դա առաջին հերթին վերաբերում է ընտրական ցուցակներին, նրան, որ Սփյուռքի քաղաքացիներին իրավունք չտրվեց քվեարկել, որը շատ կոպիտ խախտում եմ համարում, դա վերաբերում է նաեւ ընտրության ընթացքին հետեւելու ձեւերին, որի վերաբերյալ մեր կողմից արված առաջարկությունների մի մասը չընդունվեց: Դա վերաբերում է այսօր ընթացող տարբեր գործընթացներին, երբ բուհերում եւ դպրոցներում համատարած հանրապետականացում է գնում: Եվ նման շատ երեւույթներ կան, որոնք թույլ չեն տալիս ասելու՝ այո, ես հավատում եմ նախագահի ասածին: Իրենց հայտարարությունները չեն համապատասխանում մեր իրականությանը: Բայց, իհարկե, շատ կուզենայի, որ լինեին ազատ եւ արդար ընտրություններ, տա Աստված, որ ընտրությունները լինեն հենց այդպիսին»:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության խորհրդարանական խմբակցության քարտուղար Արամ Սաֆարյանին հարցրինք՝ իսկապե՞ս իշխանությունները կարեւորում են եվրոպական չափանիշներին համարժեք ընտրությունների անցկացումը, եւ կարո՞ղ է հասարակությունը ակնկալել, որ հենց այդպիսի ընտրություններ էլ կունենանք: Ի պատասխան՝ մեր զրուցակիցն ասաց. «Անձամբ ես կասկած չունեմ, որ Հայաստանի քաղաքական դաշտում այս պահին գերիշխում է այն տրամադրությունը, որ ազատ, արդար, ժողովրդավարական չափանիշներով, ես կասեի՝ եվրոպական չափանիշներով ընտրություններին մեր երկրում ուղղակի այլընտրանք չկա: Մեր գեոքաղաքական վիճակը, կուտակված ներքին եւ արտաքին խնդիրները հնարավոր է կարգավորել, լուծել միայն երկրի ներսում ժողովրդավարական ազատ ընտրությունների արդյունքում ձեւավորված իշխանություն ունենալու պայմաններում: Մեր հասարակությունը պատրաստ է համախմբվելու, համերաշխորեն արձագանքելու ներքին եւ արտաքին մարտահրավերներին միայն նորմալ, բոլորի համար ընդունելի իշխանության ձեւավորման դեպքում:

Եվ ես համոզված եմ, եթե մենք՝ Հայաստանի հիմնական քաղաքական ուժերը, ստանձնենք այդ պատասխանատվությունը եւ փոխըմբռնման մթնոլորտում այս ընտրությունները անցկացնենք պատշաճ մակարդակով, մենք ի վիճակի ենք լինելու մոտակա տարիներին հաջողությամբ արձագանքել բոլոր մարտահրավերներին»:

Նկատեցինք, որ ընդդիմադիր քաղաքական ուժերը առանձնապես ոգեւորված չեն եւ չեն հավատում, որ կլինեն արդար ընտրություններ: ԲՀԿ ներկայացուցչի կարծիքով՝ կա հոռետեսական մոտեցում, որ Հայաստանում երբեք ոչինչ չի փոխվելու, եւ ամեն հերթական ընտրությունից առաջ կամ հետո ունենալու ենք հեղափոխական իրադրություն: Ըստ Արամ Սաֆարյանի՝ «Սա ամենավատ բանն է, սա այն հուսալքությունն է, որը պատել է մեր հասարակության շատ անդամների: Եթե այս մթնոլորտը չփոխվեց, եւ եթե հոռետեսների հոռետեսությունը իրականացավ, ես կդժվարանամ առաջարկել այլ դեղատոմսեր՝ իրավիճակը շտկելու համար»:

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՍԱՅԱՆ

# Աշխարհի փոխչեմպիոնը փքաբլիթով էլ կկշտանա

15-ամյա Արմեն Աբովյանը, որը Կիոկուշին-կան կարատե դո-ի աշխարհի փոխչեմպիոն է, ապրում է Տավուշի մարզի Բագրատաշեն գյուղի մի փոքրիկ վագոն-տնակում: Անշուք ու հարմարություններից զուրկ տնակը զարդարող միակ իրերը Արմենի եւ նրա ավագ եղբոր՝ 17-ամյա Ալբերտի տասնյակ գավաթները, դիպլոմներն ու մեդալներն են: Չնայած վագոն-տնակը շատ փոքր է, տղաների մայրը՝ տիկին Գոհարը, թույլ չի տալիս, որ որեւէ մրցանակ ստվերում մնա. բոլորը պետք է իր եւ մյուսների աչքի առաջ լինեն:

«Այս տարի որոշել էի նոր տարուն ամեն ինչ գավաթների մեջ լցնել, սակայն ափսոսեցի»,- մեզ հետ զրույցում ասում է տիկին Գոհարը: Նա եւս ժամանակին զբաղվել է սպորտով ու հաջողություններ ունեցել, սակայն հանգամանքների բերումով ստիպված է եղել թողնել սպորտը: Այժմ տիկին Գոհարն իր կիսատ թողած երազանքները փորձում է իրականացնել որդիների միջոցով:



Տղաները հաճախում են Տավուշի մարզում գործող միակ Կիոկուշին-կան կարատե դո-ի խմբակ: Նրանց պատմելով՝ մարզասրահը շատ վատ պայմաններում է գործում, ինչի պատճառով մարզիկները կազդուրվելու փոխարեն ամբողջ ձմեռ հիվանդանում են: Մեր այցելության ժամանակ նկատեցինք, որ մարզասրահի, որը գտնվում էր մի կիսաքանդ շենքում, պատուհանները նույնիսկ ապակի չունեին: Մարզիչը՝ Արմեն Կիրակոսյանը, մարզիկների հետ փորձել էր ստվարաթղթի կտորներով որոշ չափով ծածկել պատուհանները: 30 մարզիկների համար ընդամենը բռնցքամարտի 2 «տանձիկ» կար:

Մոտ 5 ամիս է, ինչ տղաները մարզվում են այս պայմաններում: Ինչպես մարզիկները պատմեցին, նախկին մարզասրահը եւս անհարմար պայմաններով է եղել այն նույնպես չի ջեռուցվել, բայց գոնե լուսամուտներ ունեցել է: Սակայն քանի որ տարածքը մասնավոր է եղել, եւ սեփականատերը մի օր որոշել է դրա դիմաց գումար պահանջել, կարատեի մարզիչը ստիպված է եղել լքել տարածքը: Դրանից հետո գյուղապետարանը պարապմունքների համար անվճար տրամադրել է ներկայիս շենքը, որը նախկինում զորամաս է եղել:

Մեր այցելած օրը լրանում էր խմբի գործունեության 9 տարին: Պարապմունքին 30 մարզիկներից ներկա էր մոտ 15-ը: Մյուսները կամ հիվանդ էին, կամ էլ պարզապես ձմռան մի քանի ամիսներին որոշել էին դադարեցնել պարապմունքները: Դրսում առատ ձյուն էր տեղում, բայց մարզիկները այնտեղ էին նախավարժանք կատարում: Մեր հարցին, թե ինչու են այդ սառնամանիքին դրսում պարապում, մարզիկները կատակեցին, թե առանձնապես տարբերություն չկա, դահլիճի ներսում էլ է նույն ջերմաստիճանը:

Մարզչի խոսքերով՝ խմբում 12-ից ավելի չեմպիոն, մեդալակիր կա, ոմանք՝ աշխարհի, ոմանք՝ Կովկասի, Եվրոպայի ոմանք էլ՝ Հայաստանի մասշտաբով: Նրանցից 3-ն ունեն սեւ գոտի: Տղաները հաճախ ստիպված են լինում հրաժարվել տարբեր երկրներում կայացող մրցաշարերից եւ սեմինարներից ֆինանսական դժվարությունների պատճառով: Նրանցից միայն մեկը՝ Արմեն Աբովյանն ունի հովանավոր: Սակայն հովանավորը ֆինանսական պատասխանատվություն է կրում միայն մրցաշարերի ժամանակ: Նա եւ խմբի շատ մարզիկներ ստիպված են եղել հրաժարվել վերջերս Ծաղկաձորում կայացած սեմինարից, որն անց էին կացնում ճապոնիայից հրավիրված վարպետները:

Արմենի եւ Ալբերտի հայրը հիշում է այն օրը, երբ տղան Մոսկվայից Հայաստան եկավ՝ որպես աշխարհի փոխչեմպիոն: Նրա խոսքերով. «Գյուղում 10000 դրամ պարտք վերցնելով՝ հասա Երեւան, այնտեղ Արմենի համար փքաբլիթ գնեցի ու երթուղայինով հասանք գյուղ»,- պատմում է նա: Ըստ նրա՝ օդանավակայանում չկար եւ ոչ մի լրագրող, ոչ ոք չլուսաբանեց իրենց համար այդքան կարեւոր հաղթանակը: Հոր պատմելով՝ միայն գյուղ հասնելով՝ Արմենը իսկապես վայելեց հաղթանակի բերկրանքը. այնտեղ դրսում նրան անհամբերությամբ սպասել են ամբողջ դպրոցն ու գյուղապետարանը, որը չեմպիոնին 50000 դրամով պարգեւատրել է:

Մեզ հետ զրույցում խմբի բոլոր անդամները, չնայած դժվարություններին, նշեցին, որ երբեք հանդես չեն գա այլ երկրի դրոշի ներքո:

ԱՐԱՔՍ ՄԱՄՈՒԼՅԱՆ

# Կինն ուժասպառ է եղել

## Նրանից խլում են երեխային ու արգելում մոր հետ շփվել ու տեսնվել

Երեկ Ալվարդ Մանուկյանը կանանց եւ մայրության տոնն արցունքն աչքերին է դիմավորել: Արդեն 10 օրից ավելի է՝ նա չգիտի, թե որտե՞ղ է գտնվում իր 9-ամյա որդին՝ Գոռը, ի՞նչ է ուտում, որտե՞ղ է գիշերում: Երեկ «Առավոտի» խմբագրություն եկած Ա. Մանուկյանը պատմեց, որ փետրվարի 24-ին Գոռին հայրը՝ Աշոտ Բաղդասարյանը, դպրոցից վերցրել է եւ տարել իր հետ: Ճիշտ է, երեխային բերում է դպրոց, սակայն, մոր պատմելով, իր նախկին ամուսինը Գոռին կտրականապես արգելում է մոր հետ շփվել. «Գոռն էլ վախից ենթարկվում է նրան: Որ այսպես շարունակվի, երեխաս առողջական շատ լուրջ խնդիրներ կունենա՝ թե՛ հոգեկան, թե՛ ֆիզիկական: Ինձ մոտ եղած ժամանակ Գոռը շատ ջերմ շփվում է ինձ հետ, բայց հոր ներկայությամբ երեխան միանգամից փոխվում է եւ վախից ասում, որ ինձ չի ուզում տեսնել»:

Ալվարդ Մանուկյանի եւ Աշոտ Բաղդասարյանի հարաբերություններն արդեն 4-5 տարի է՝ խիստ լարված են, Աշոտն իր կնոջը ցավ պատճառելու համար մշտապես վերցնում է երեխային, օրերով, ամիսներով կորում՝ թույլ չտալով, որ անչափահաս երեխան շփվի մոր հետ: Իսկ վրեժի արդյունքում երեխան է տուժում: Ծնողների անհաշտության պատճառով երեխան պարբերաբար սթրեսի է ենթարկվում:

2008 թվականից սկսած՝ նախկին ամուսինները երեխայի հարցով դատական քաշքշուկների մեջ են, սակայն ոչ մի կերպ խնդիրը չի լուծվում: Եվ մինչեւ հարցը չլուծվի եւ չորոշվի՝ ծնողներից ով ինչ կարգավիճակ եւ ինչ պատասխանատվություն պետք է կրի երեխայի համար, մայրը ամիսներով երեխայի երեսը չի տեսնի:

«Առավոտն» իր մի քանի հրապարակումներում (23.03.2011թ., 05.06.2011թ. եւ այլն) նշել է, որ ծնողների վեճերի պատճառով երեխան գտնվել է սթրեսային վիճակում, ենթարկվել է ֆիզիկական ու հոգեբանական բռնությունների: Բացի այդ, երեխան 3-4 տարի շարունակ ուղղակի զրկված է եղել մոր խնամքից եւ օրը 24 ժամ գտնվել է հոր կողքին: Հենց այս հանգամանքն էլ հաշվի առնելով՝ Շենգավիթ վարչական շրջանի խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովը, որը զբաղվում է երեխաների խնդիրներով, եկել էր եզրակացության, որ Գոռի կյանքին եւ առողջությանը վտանգ է սպառնում եւ անհրաժեշտ է, որպեսզի անհապաղ նրա խնամքով ժամանակավորապես զբաղվի որեւէ խնամքի կենտրոն: Ոստիկանության միջամտությամբ ամիսներ առաջ Գոռը տեղափոխվել էր Հայ օգնության ֆոնդի երեխաների աջակցման կենտրոն: Մի քանի ամիս կենտրոնի հոգեբաններն ու մասնագետները աշխատելուց հետո Գոռը սկսել էր շփվել մոր հետ, ցանկություն հայտնել ապրել նրա հետ:

Այդ ընթացքում Շենգավիթ վարչական շրջանի խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովը, հաշվի առնելով երեխայի կյանքին սպառնացող վտանգները, դիմել էր դատարան՝ հոր իրավունքները սահմանափակելու: Սակայն դատարանում գործի լսումը կասեցվել էր, քանի որ Աշոտ Բաղդասարյանը հայցով դիմել էր դատարան՝ Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի որոշումը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով: Եվ չնայած այն բազմաթիվ ապացույցներին, որ որպես երրորդ անձ դատարանին ներկայացրել էր երեխայի մայրը՝ Ալվարդ Մանուկյանը, վարչական դատարանը Աշոտ Բաղդասարյանի հայցը բավարարել էր՝ այդպիսով թույլ տալով, որպեսզի երեխայի հարցը նորից մնա օդում կախված: Ա. Մանուկյանը գտնում է, որ հայրը երեխային պարզապես որպես զենք՝ օգտագործում է իր դեմ: Դրա ապացույցն այն է, որ Աշոտ Բաղդասարյանը Գոռի հայրությունը, այն էլ դատարանի միջոցով, ճանաչել է 2008-ին, երբ փոքրիկն արդեն 5 տարեկան է եղել, տիկին Ալվարդի խոսքերով՝ դատարանի որոշմամբ ալիմենտի գումարները երբեք իր կամքով չի վճարել, եւ նրանից բռնագանձել են:

Ա. Մանուկյանի խոսքերով, հոր մոտ գտնվելու ժամանակ երեխայի առողջությանը լուրջ վտանգ է սպառնում, քանի որ Գոռը գիշեր-ցերեկ հոր հետ աշխատավայրում է լինում, բուլկիներով ու նրբերշիկներով է սնվում, իր անկողնում չի քնում եւ այլն: Բացի այդ, Ա. Մանուկյանին ծեծելու համար վերջերս Շենգավիթի ոստիկանությունը Աշոտի դեմ քրգործ է հարուցել, սակայն ինչպես կինն է պատմում, դատարանում Աշոտի հետ հաշտության է եկել, քանի որ որպես մայր՝ չի ցանկացել, որպեսզի հոր դատված լինելը իր երեխայի կենսագրության վրա սեւ բիծ թողնի: Հաշտության համաձայնագրով Աշոտ Բաղդասարյանն էլ պարտավորվել էր զերծ մնալ բռնություններից ու նախկին պահելաձեւից:

Այս ողջ պատմությունից ուժասպառ եղած Ա. Մանուկյանը դիմում է ՀՀ նախագահին, իրավապաշտպան մարմիններին՝ խնդրելով երեխայի հարցին վերջնական լուծում տալ. «Եթե նա կարողանում է բոլոր ատյաններում իր «հարցերը լուծել», իսկ ես տեր չունեմ, ի՞նչ է, պետք է ես տարիներով իմ երեխայից կարոտ մնամ ու տանջվեմ- տառապե՞մ»:

Սեփ. լր.

### Բաղդասարովը «Արմավիայի» համար գնորդ է ման գալիս



«Արմավիա» ավիաընկերության սնանկանալ-չսնանկանալու հարցը ընկերության սեփականատեր Միխայել Բաղդասարովը նախօրեին՝ լրատվամիջոցներից մեկին տված հարցազրույցում որոշակիացրեց: Ազգային ավիափոխադրող «Արմավիա»-ի սեփականատերը շատ պարզ հայտարարել է, որ եթե «Զվարթնոց» օդանավակայանը սպասարկման գները չիջեցնի, ապա «Արմավիան» կգնա սնանկացման ու կփակվի: Միխայել Բաղդասարովի խոսքերով՝ «Եթե համաձայնության չգանք՝ կհայտարարենք սնանկացման մասին, տոմսերը կվերադարձնենք, ինքնաթիռները կվաճառենք ու պարտքերը կտանք»:

Նշենք, որ օրեր առաջ քաղաքացիական ավիացիայի նախկին պաշտոնյաներից մեկը նույնպես կանխատեսել էր, որ «Արմավիային» տանում են սնանկացման, քանի որ ինչ-որ մեկը աչք է դրել այս բիզնեսի վրա, որն էլ հավակնում է դառնալ ազգային ավիափոխադրող: Միխայել Բաղդասարովը մեկնաբանելով այս եւ նմանատիպ այլ հայտարարություններ՝ ասել է. «Ես հազար անգամ ասել եմ՝ «Արմավիան» վաճառվում է, հազար անգամ էլ ասել եմ՝ «Արմավիան» չի վաճառվում: Հիմա էլ ասում եմ՝ եթե ուզող կա, հիմա էլ հաճույքով կվաճառեմ: Ո՞վ է ուզում գնել, մատով ցույց տվեք»:

Չնայած դրան, պարոն Բաղդասարովը հայտնել է, որ ՀՀ վարչապետը հանձնաժողով է ստեղծել, որն արդեն զբաղվում է այս հարցով. «Եթե նպաստավոր պայմաններ ստեղծեն, կաշխատենք, եթե ոչ՝ ուղղակի ի վիճակի չենք լինի աշխատելու»:

Նշենք, որ տարիներ առաջ էլ հսկայական պարտքերի պատճառով սնանկացման տարան նաեւ «Հայկական ավիաուղիներին», ինչի հետեւանքները մինչ օրս չեն կարողանում մարսել «Հայկական ավիաուղիների» բազմաթիվ աշխատակիցներ, որոնց ընկերությունը հարյուր հազարներով պարտքեր ունի մինչ այժմ:

Սեփ. լր.

Առավոտ aravot daily
ՈՒՐԲԱԹ 09.03.2012

# Սայրով վնասել էր պարանոցը

## Ոստիկանության բաժնում իրեն վնասած քաղաքացին մեղադրվում է խուլիգանություն կատարելու մեջ

Անցած տարվա սեպտեմբերին Վանաձորի Հակոբ Կյուրեղյանը ոստիկանության Վանաձորի բաժնում իր հետ նախապես վերցրած սափրվելու մեկանգամյա սայրով վնասել է պարանոցը, ապա՝ նախաբազուկը: Այնուհետեւ նյարդայնացած վիճակում սկսել է բարձրաձայն բղավել, որից հետո երկրորդ հարկի աստիճաններից իրեն նետել է առաջին հարկ:

23-ամյա Հակոբ Կյուրեղյանը ոստիկանության Վանաձորի բաժին էր ժամանել այն բանից հետո, երբ իրեն անծանոթ գործի շրջանակներում ոստիկանության տեղամասային տեսուչ Նարեկ Սեփխանյանից հեռախոսային խոսակցության ժամանակ տեղեկացել էր, որ բաժին չներկայանալու դեպքում բերման կենթարկվի:

Զայրացած Կյուրեղյանն էլ ժամանելով բաժին՝ սկսել էր, որպես բողոքի նշան, ինքնավնասում կատարել:



Ոստիկանները, կիրառելով ձեռնամարտի հնարք, արյունահոսող Կյուրեղյանին փորձել են հանգստացնել, սակայն՝ ապարդյուն: Նա չի ենթարկվել ոստիկաններին, դիմադրություն է ցույց տվել, ոստիկանների ցուցմունքներով հայհոյել նրանց, ավելին, հրաժարվել է ոստիկանության բաժին հրավիրված բուժքույրերի օգնությունից, որից հետո ոստիկանները ձեռնաշղթաներ են անցկացրել նրան եւ տեղափոխել ձերբակալվածների պահպանման վայր (ՁՊՎ):

Դեպքից հետո Հակոբ Կյուրեղյանի նկատմամբ քրեական գործ է հարուցվել՝ խուլիգանություն կատարելու հանցակազմով:

Նրան մեղադրանք է առաջադրվել հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու համար, ինչը զուգորդվել է իշխանության ներկայացուցիչների եւ հասարակական կարգի խախտումը խափանող անձանց նկատմամբ բռնություն գործադրելով, որի պատճառով խախտվել է ոստիկանության Վանաձորի բաժնի բնականոն աշխատանքը:

Հակոբ Կյուրեղյանի նկատմամբ հարուցված քրեական գործը քննվում է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում:

Դատարանում Հակոբ Կյուրեղյանի շահերը պաշտպանում են փաստաբաններ Կարեն Թումանյանը եւ Էդմոն Մարուքյանը:

Պաշտպան Կարեն Թումանյանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ թեեւ պետությունը համապատասխան դասընթացների միջոցով մեծ ծախսեր է կատարում ոստիկաններին պատրաստելու այնպիսի իրավիճակների, որոնց ժամանակ վերջիններս համապատասխան հմտություններ ձեռք կբերեն՝ կանխելու համար ինքնավնասման կամ ուրիշին վնասելու փորձերը, այնուամենայնիվ, դեպքի պահին ոստիկանության աշխատակիցները անհրաժեշտ պատրաստվածություն չեն ունեցել՝ կանխելու իր պաշտպանյալի ինքնավնասումը:

«Ավելին՝ արյունահոսող մարդու նկատմամբ կիրառել են ձեռնամարտի հնարք, առանց արյունահոսությունը դադարեցնելու կիրառելով հատուկ միջոց՝ ձեռնաշղթաներ հագցնելը, տարել են հերթապահ մաս եւ տեղավորել ձերբակալվածների պահպանության վայրում՝ իբր մեր պաշտպանյալը հասարակական կարգ է խախտել»,- ոստիկանության աշխատակիցների կատարած խախտումների մասին է պատմում Հակոբ Կյուրեղյանի փաստաբան Էդմոն Մարուքյանը՝ պարզաբանելով, որ իր պաշտպանյալին բաժին են հրավիրել օրենքով սահմանված ընթացակարգի խախտմամբ՝ առանց ծանուցագրի, զայրացած Կյուրեղյանն էլ իր վրդովմունքը արտահայտել է ինքնավնասմամբ, եւ փոխանակ մարդուն օգնեն, դուրս բերեն այդ վիճակից, ոստիկանները վերոնշյալ հնարքները կիրառելով՝ թույլ չեն տվել նրան հեռանալ բաժնից:

«Անօրինաբար սահմանափակել են Կյուրեղյանի ազատությունը, արգելանքի վերցրել: Ո՞վ է տեսել՝ ինքնավնասման համար արգելանքի վերցնեն: Խուլիգանության հոդվածով էլ գործ են հարուցել, որպեսզի կոծկեն իրենց անօրինականությունները»,- եզրափակում է փաստաբանը:

ԱՆՈՒՇ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ
Վանաձոր

# 17 տարի է՝ դատարանի վճիռը չի կատարվում

ՀՀ գլխավոր դատախազությանը պարբերաբար դիմում է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի բնակչուհի Լիանա Գրիգորյանը:

Նրա օգտին տեղի ժողդատարանը 1995թ.-ին վճիռ է կայացրել, որը մինչ օրս չի կատարվում:

Լիանա Գրիգորյանին դաժան ծեծի էր ենթարկել Շահումյան փողոցի 12/5 տան բնակիչ, նախկինում դատված Գուրգեն Գեւորգյանը, որն այդ արարքի համար դատապարտվել էր 3 տարվա ազատազրկման: Լիանա Գրիգորյանը «Առավոտի» հետ զրույցի ժամանակ հայտնեց, որ ծեծի հետեւանքով ստացել է ծանր մարմնական վնասվածք, ոտքի սրունքի ոսկրի կոտրվածք: Ծեծն էլ կապված էր Գ. Գեւորգյանի կնոջ կողմից Լիանայի հասցեին արված չարախոսության հետ: Այդ կապակցությամբ Լիանան գնացել էր նրանց տուն: Կանանց վեճին միջամտել էր Գ. Գեւորգյանը: Դատարանը որոշել էր հօգուտ Լիանայի բռնագանձել 305 000 դրամ՝ որպես փոխհատուցում: Արգելանքի տակ դրվեց Գուրգեն Գեւորգյանի տունը, իսկ հարկադիր կատարողները նախ հայտնեցին, թե պարտապանը գրանցված չէ տվյալ տանը, ապա՝ թե նա իր անունով չունի անշարժ եւ շարժական գույք, այսինքն՝ անվճարունակ է:

Ըստ զրուցակցիս՝ պարտապանի երկրորդ բնակարան է տարվում նրա մայրը, որը ստորագրում է մի ակտի տակ, ըստ որի՝ պարտապանն, իրոք, ոչինչ չուներ: Մինչդեռ՝ «մորս ստորագրել են տվել ոչ թե վիճահարույց բնակարանում, որտեղ գրանցված էր Գուրգեն Գեւորգյանը, այլ՝ մի այլ բնակարանում, ուր իրեր չկային»:

«Նկարագրելով պարտապանի ընտանիքի սոցիալ-տնտեսական ծանր կացությունը, ցուցաբերելով կարեկցանք, որը մարդասիրական է եւ գովելի, պատկան մարմիններն էլ չեն հոգում իմ մասին, չեն փաստում այն, որ ես ապրում եմ զույգ թոշակառու ծնողներիս հետ, միայնակ կին եմ, որ պարտապանն ինձ հասցրել է անաշխատունակության, եւ ես գտնվում եմ նյութական ծանր վիճակում»,- ասում է Լ. Գրիգորյանը:

Լիանա Գրիգորյանը նամակ է ուղարկել նաեւ արդարադատության նախարարին՝ նրան տեղեկացնելով, որ տարել է երկու ծանր վիրահատություն:



Իսկ այդ վիրահատությունների եւ ամբուլատոր բուժման ծախսերը հոգացել է ինքը՝ պարտքով վերցնելով ահռելի գումարներ:

Այդ պարտքերի պատճառով վտանգված է Լիանայի հայրական տունը, քանի որ դրանք չվերադարձնելու դեպքում կալանքի տակ կդրվի այն:

Գ. Գեւորգյանը մահանում է:

Դատարանի կողմից կարճվում է կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթը՝ պարտապանի մահվան կապակցությամբ:

Տավուշի մարզի դատախազության դատախազ Ա. Չիլինգարյանի 19.10. 2010թ. պաշտոնական պատասխանի համաձայն. «Շահումյան 13/4 բնակարանը հարկադիր աճուրդով չի օտարվել, քանի որ նշված բնակարանը հանդիսացել է հանգուցյալ պարտապանի կնոջ՝ Գ. Մարգարյանի ժառանգական գույքը, եւ վաճառվել է բնակարանի սեփականատեր Գ. Մարգարյանի կողմից»: Դատախազությունը նաեւ արձանագրել էր, թե «Լ. Մարգարյանը պարտապանի մահից հետո չի դիմել դատական պաշտպանության՝ դատական կարգով նրա պարտականությունների իրավահաջորդ ճանաչելու պահանջով»:

Իսկ թե ով եւ երբ կհատուցի Լիանային՝ հայտնի չէ:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

## Պատարագ եւ ուխտագնացություն



Մարտի 10-ին Հայ առաքելական եկեղեցին տոնում է Սուրբ Հովհաննես Երուսաղեմացի հայրապետի, Սուրբ հայրապետ Հովհան Օձնեցու եւ վարդապետներ Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթեւացու հիշատակը: Այդ առիթով 11:30-ին կմատուցվի պատարագ Օձունի տաճարում: Պատարագիչ քահանան է Օձունի ենթաշրջանի հոգեւոր հովիվ տեր Վրթանես Բաղալյանը: Պատարագից հետո ուխտավորները կայցելեն Արդվում գտնվող Սուրբ Հովհան Իմաստասեր կաթողիկոս Օձնեցու դամբարան: Ապրիլի 17-ին՝ Սուրբ Հովհան Օձնեցու մահվան տարելիցի առիթով ժամը 11-ին, նույնպես կմատուցվի պատարագ, որից հետո կբաժանվի մատաղ, այնուհետեւ կկազմակերպվի ուխտագնացություն դեպի սրբի շիրիմ:

# Հափշտակել էին կոշիկի տուփի մեջ պահվող ոսկյա զարդերը

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը 11 տարվա ազատազրկման է դատապարտել Հրազդանի բնակիչ Ն. Կիրակոսյանին: Նա, ըստ գործի նյութերի, 4 տարի առաջ նախնական համաձայնության էր եկել իր ծանոթներ Վ. Հովհաննիսյանի, Ա. Հեղոյանի, Կ. Թոռչյանի եւ Հ. Թորոսյանի հետ՝ ոսկյա իրերի առեւտրով զբաղվող Է. Գրիգորյանից հափշտակություն կատարելու շուրջ:

Ավազակային հարձակման եղանակով հափշտակությունը կատարելու համար նրանք դերաբաշխում էին կատարել, ձեռք էին բերել դիմակներ, ինքնաձիգ եւ մուրճ: Համաձայն նախապես մշակված ծրագրի՝ նրանք դարանակալել էին Հրազդանի Միկրոշրջան թաղամասի 106-րդ եւ 107-րդ շենքերի մոտ: Ըստ գործով ձեռք բերված ապացույցների. «Տեսնելով Է. Գրիգորյանի ավտոմեքենան՝ անմիջապես փակել են մեքենայի ընթացքի ճանապարհը եւ ինքնաձիգի գործադրմամբ ավազակային հարձակում գործել Է. Գրիգորյանի եւ նրա որդի Կ. Գրիգորյանի նկատմամբ: Բացելով մեքենայի դռները՝ մեքենայի հետեւի նստելատեղի վրայից վերցրել են կոշիկի տուփերում առկա առանձնապես խոշոր չափերի՝ 33 555 000 դրամ արժողությամբ տարբեր տեսակի ոսկյա զարդերն ու հեռացել»:

Հանցագործությունից հետո Ն. Կիրակոսյանը, Ա. Հեղոյանը եւ Կ. Թոռչյանը փախել էին: Նրանց նկատմամբ հայտարարվել է հետախուզում, իսկ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը: Հետախուզման ժամանակ էլ պարզվել է, որ ՌԴ-ում գտնվող Կ. Թոռչյանը մահացել է:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

# Մշակույթի նախարարի հերթական սին հայտարարությունը

Քաղաքը պատմական կատեգորիա է, ու Երևանն էլ բացառություն չէ: Որքան էլ որ մեր մայրաքաղաքի մասին գրված վերջին երգերից մեկն ազդարարում է, թե «Երևանը շենք ու տուն չէ, Երևանը մենք ենք», այնուամենայնիվ մասնագիտական սահմանումն ասում է. «Քաղաքը միջին կամ մեծ չափեր ունեցող բնակավայր է, որը բաղկացած է տարբերակված գործառնություններ ունեցող շենքերից՝ կառավարում, տնտեսություն, տրանսպորտ, մշակույթ, կրթություն, բնակելի ֆոնդ և այլն»: Այդ շենքերը ներկայացնում են քաղաքի պատմության շերտերը. պահպանել դրանք՝ նշանակում է պահպանել քաղաքի պատմական հավաստիությունը:

Պատմությունից գիտենք դրվագներ, երբ բնակիչները դառնում են սեփական քաղաքի ամեն փողոցի ու շենքի պաշտպանը՝ կերտելով տվյալ քաղաքի պատմության հերոսական էջերը: Սա, Աստված մի արասցե, օրհասական վտանգի դեպքում: Մեզ մոտ, սակայն, խաղաղ պայմաններում ևս քաղաքի պատմական շենքերը կարող են վտանգվել՝ հայրենի կառավարության որոշումների արդյունքում:

Lragir.am ում օրերս տեղ գտած «Հասմիկ Պողոսյանն էլ պակաս հայ չէ» նյութից տեղեկանում ենք, որ ՀՀ մշակույթի նախարարը փակ շուկայի խնդրի շուրջ խոսելիս հայտարարել է. «Այն, ինչ ապամոնտաժվում է Երևանում, այդ որոշումները կայացվել են 2004 թվականին: Հուշարձանի ապամոնտաժման, քանդման, վերացման որևէ որոշում, ես ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, կառավարությունը չի ընդունել: Սխալ մեկնաբանություններ են եղել, չկա նման բան: Կան այդ որոշումների հետևանքները, այսինքն՝ երբ որոշումներն ընդունվել են, սակայն ի կատար չեն ածվել, գործընթացը տեղափոխվել է 7-8 տարի հետո, և մենք արդեն տեսնում ենք այդ որոշումների վերջնական արդյունքը, ցավոք սրտի: Ես այդպիսի տրամադրություն չունեմ, որ ասեմ, թե մեր օրերում մենք քանդում ենք հուշարձաններ, վերացնում ենք հուշարձաններ»: Քանի որ նախարարը շատ մշուշոտ էր խոսել 2004-ին, այսինքն՝ այն ժամանակ կայացված որոշումների մասին, երբ ինքը դեռ նախարար չէր, որոշեցինք պարզել՝ ինչի մասին է խոսքը:

ՀՀ մշակույթի նախարարության Պատմության ու մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Երևանի տարածքային բաժնի պետ Կարո Այվազյանի և գործակալության պետ Սերժիկ Առաքելյանի հեռախոսները երեկ «չպատասխանեցին»: «Հասանելի» էր միայն գործակալության պետի տեղակալ Սամվել Մուսոյանը: Հարցրինք՝ ի՞նչ որոշումներ նկատի ուներ նախարարը: Պարոն Մուսոյանն ասաց, որ խոսքը 2004 թվականի 1616-N որոշման մասին է, որով իբր 10 մշակութային հուշարձաններ պետք է ապամոնտաժվեն և տեղափոխվեն: «Երկրորդ հավելվածում է նշված»,- հավելեց Մուսոյանը: Բնականաբար, փնտրեցինք այդ որոշումը և գտանք: Իրականում ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի N 1616-Ն որոշմամբ հաստատվում էր ՀՀ Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը, ինչ վերաբերում է Սամվել Մուսոյանի նշած հավելվածին, այնտեղ էլ տեղափոխման ենթակա 14 հուշարձանների ցանկն էր ներկայացվում, որտեղ աղմուկ հանած փակ շուկայի մասին (հեղինակ՝ Գրիգոր Աղաբաբյան) խոսք անգամ չկար: Ցանկում Հին Երևանի շենքերն էին, որոնք իբր պիտի հետո այլ տեղ հավաքվեին, և համապատասխան կարգով դրանց համար պետք է տարածք հատկացվեր: Բայց բոլորն էլ քաջատեղյակ են, որ նման տարածք այդպես էլ չհատկացվեց: Այսինքն՝ ինչ քանդվում է Երևանում, մատնվում է անտերության, և զուր է նախարարն արդարանում, թե այս կամ այն որոշումն իր օրոք չի եղել: Չէ՞ որ ՀՀ մշակույթի նախարարն իրավահաջորդն է ՀՀ կառավարության որոշումներն ի կատար ածելու: Եվ եթե, ինչպես նախարարն է ասել lragir.am-ին, որոշումն ավելի վաղ է ընդունվել, գործընթացն էլ տեղափոխվել 7-8 տարի հետո, ի՞նչն է իրեն խանգարում ի շահ Երևանի՝ ՀՀ կառավարությունում հիմնավորել այդ որոշման սխալականությունը, մանավանդ՝ քանդման որոշում առհասարակ չի կարող լինել. օրենքը նման որոշում չի սահմանում, օրենքով կարելի է հուշարձանը միայն տեղափոխել, այն էլ բացառիկ դեպքերում:

Ակամայից հիշեցինք Հասմիկ Պողոսյանի ձեռամբ ոչ վաղ անցյալում ՀՀ կառավարություն տարած մեկ այլ որոշման նախագիծ՝ «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի քանդման վերաբերյալ, որին «Առավոտը» անդրադարձել էր ժամանակին: Ու մեկ անգամ ևս համոզվեցինք, թե որքան սին էր նախարարի հիմնավորման նախագիծը, նույնքան էլ սին է նրա այս հայտարարությունը:

Գալով խաղաղ պայմաններում Երևանի ժառանգությանը սպառնացող հերթական վտանգին՝ կենտրոնական փակ շուկայի ճակատագրին, ՀՀ մշակույթի նախարարին հիշեցնենք, որ դեռ միջնադարում քաղաքներ են համարվել այն բնակավայրերը, որոնք շուկա են ունեցել:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ



Նախկին Աստաֆյան փողոցը:



Տեսարան՝ Հին Երևանից:

# Հայապահպանություն Սփյուռքում՝ ըստ երգչուհի Մարգարիտ Շահինյանի

Շուրջ 10 տարվա ընդմիջումից հետո «Արամ Խաչատրյան» համերգասրահում մարտի 11-ին հայկական ժողովրդագուսանական երգարվեստի երկրպագուները հնարավորություն ունեն ունկնդրելու սիրված երգչուհի Մարգարիտ Շահինյանի կատարումները: Երեկոն նվիրվում է երգչուհու բեմական գործունեության 40-ամյակին: Նա հանդես կգա Հայաստանի պետական ազգային նվագարանների նվագախմբի (ղեկավար՝ Նորայր Դավթյան) և «Տաղարան» հնագույն երաժշտության անսամբլի (ղեկավար՝ Սեդրակ Երկանյան) ընկերակցությամբ: Համերգի օրը ունկնդիրը հնարավորություն կունենա ձեռք բերել արվեստագետի 2 CD-ները՝ «Իմ արյան կանչը», որտեղ տեղ են գտել ժողովրդագուսանական երգեր, և «Դարերի խորքից» ալբոմը, ուր իսկապես գանձեր են՝ վաղ միջնադարյան, կոմիտասյան նմուշներ ու հայրեններ: Հիշյալ CD-ները 2001թ. Լոս Անջելեսում կայացած առաջին Armenian Music Worlds մրցանակաբաշխությանն արժանացել են «Լավագույն ժողովրդական, գուսանական կատարում» մրցանակին:

«Առավոտի» հետ զրույցում Մարգարիտ Շահինյանը հայրենիքից իր երկարատև բացակայությունը «արդարացրեց» Լոս Անջելեսի «Մաշտոց» ազգային համալսարանում դասախոսական աշխատանքով: Իսկ այդ տարիներին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Առնո Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական քոլեջի «բաց թողած» մանկավարժի իր աշխատանքի մասին ասաց, թե մեծ է կարոտը ուսանողների և իր հանդիսատեսի նկատմամբ, հետո էլ հիշեցրեց Սփյուռքում մասնագետների անհրաժեշտության մասին:



Հայաստանում կարծես վերջ չունի նոր ժամանակներում սկիզբ առած ժողովրդագուսանական երգերի աղավաղման «գործընթացը»: Դժվար չէ պատկերացնել, թե Ամերիկայի միացյալ նահանգներում ի՞նչ է կատարվում այդ ոլորտում: Ի պատասխան մեր այս դիտարկման՝ արվեստագետը մեջբերեց ԱՄՆ-ում շուրջ 45 տարի գործող Barseghian studio-ի հիմնադիր Գևորգ Բարսեղյանի մտատանջությունն այն առիթով, թե միշտ չէ, որ հայրենիքից բարձրակարգ ու բարձրարվեստ կատարողներ են ներկայանում Սփյուռքում: Այս «մասով» տիկին Շահինյանը կարծես սփոփանք հայտնեց, որ կոնկրետ ԱՄՆ-ում, բեմարվեստին զուգահեռ, մանկավարժական գործունեություն են ծավալել Երևանի կոնսերվատորիայում ուսում առած հիանալի երաժիշտներ, այդ թվում՝ երգչուհիներ Անահիտ Ներսիսյանը, Սալբի Մայիլյանը և ուրիշներ: Անդրադառնալով ԱՄՆ-ում իր մանկավարժական գործունեությանը՝ Մարգարիտ Շահինյանը հայտնեց. «Տեղի «Ասպարեզ» թերթում հանդես եմ եկել հոդվածներով, թե ինչպես պահպանել հայրենի երգարվեստի անաղարտությունը: Բացի ժողովրդական երգեցողություն առարկայից, դասավանդել եմ ֆոլկլորագիտություն, Հայ երաժշտարվեստի պատմություն»: Հավելեց նաև, որ Սփյուռքի ուսումնական գործընթացը էականորեն տարբերվում է հայաստանյանից. «Այնտեղ սովորողը ցանկություն ունի վերցնելու, ստանալու այն գիտելիքները, ինչն առնչվում է զուտ ազգային արվեստի հետ, բայց ոչ՝ ավելին: Ի վերջո, դա ոչ թե պարտադիր է, այլ ազգային ուսուցում է: Իմ խորին համոզմամբ, այն՝ թեկուզ առաջին հայացքից փոքր թվացող աշխատանքը, որ տարվում է Սփյուռքում, հայապահպանության նախապայմանն է»:

Անդրադառնալով իր հոբելյանական երեկոյին՝ Մարգարիտ Շահինյանն ասաց, որ առաջին անգամ հանդես կգա նաև սեփական ստեղծագործություններով: Հետաքրքրությանը՝ գուցե երգչուհու մոտ ցանկություն է առաջացել համալրելո՞ւ մերօրյա աշուղների շարքերը, արվեստագետը պատասխանեց. «Միանշանակ՝ ոչ: Թեև իմ կոչումը երգելն է, սակայն կշարունակեմ ստեղծագործել»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Առավոտ aravot daily
ՈՒՐԲԱԹ 09.03.2012

VIVAcell MTS

# ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## Լիլիթն ու Էլինան մի փոքր բարելավել են դիրքերը



Թեւ Լիլիթ Մկրտչյանը եւ Էլինա Դանիելյանը փոքր-ինչ բարելավել են իրենց դիրքերը, սակայն դեռ 1,5 միավորով ետ են մնում առաջատարներից: Թուրքիայում շարունակվում է շախմատի Եվրոպայի կանանց անհատական առաջնությունը: Վեցերորդ տուրում Էլինա Դանիելյանը, Լիլիթ Մկրտչյանը եւ Հայաստանի նորընծա չեմպիոնուհի Աննա Հայրապետյանը հաղթանակ տարան: Լիլիթ Գալոյանը վաստակեց կես միավոր, եւ միայն Մարիա Կուրսովան անհաջողության մատնվեց:

Յոթերորդ տուրից առաջ Լիլիթ Մկրտչյանը 4,0 միավորով ընթանում է մրցաշարային աղյուսակի 16-րդ հորիզոնականում: Նույնքան միավորով նրան հաջորդում է Էլինա Դանիելյանը: Կուրսովան, Գալոյանը եւ Հայրապետյանը իրենց անվան դիմաց գրանցել են 3,0-ական միավոր եւ ընթանում են, համապատասխանաբար, 56-րդ, 59-րդ եւ 64-րդ հորիզոնականներում:

## Ջաբուրյանը հաղթեց ադրբեջանցուն, բայց մեդալ նվաճել չկարողացավ

Սերբիայի մայրաքաղաքում ընթացող ազատ ըմբշամարտի Եվրոպայի առաջնության երկրորդ օրը մեր հանրապետության ներկայացուցիչներն անմասն մնացին մեդալներից:

Մինչեւ 55 կգ քաշային Միհրան Ջաբուրյանը մեկնարկային գոտեմարտում ադրբեջանցի Ջալիբ Ալիեւին հաղթելուց հետո՝ երկրորդ մրցափուլում պարտության մատնեց նաեւ բելառուսցի Անդրեյ Կոմարին: Սակայն հայ ըմբիշը կիսաեզրափակչում զիջեց Ջամալ Օթարսուլթանովին (Ռուսաստան), որից հետո արդեն պետք է պայքարեր միայն բրոնզե մեդալի համար: Ավաղ, Միհրանը համառ պայքարում տանուլ տվեց նաեւ Ռադոսլավ Վելիկովին (Բուլղարիա) եւ անմասն մնաց մեդալից:



Նույն օրը մեր հանրապետության երկրորդ ներկայացուցիչը՝ մինչեւ 60 կգ քաշային Արթուր Առաքելյանը, 1/16 եզրափակչում առավելության հասավ լեհ Կրիշտոֆ Բիենկովսկու նկատմամբ, որը, սակայն, նրա միակ հաջողությունը եղավ Եվրոպայի առաջնության մրցագորգում: Հաջորդ փուլում Արթուրը պարտվեց ռումինացի Ջորջ Բուկուրին եւ դուրս մնաց հետագա պայքարից:

## Հունահռոմեականները նույնպես մեկնեցին Բելգրադ

Երեկ հունահռոմեական ըմբշամարտի Հայաստանի ազգային հավաքականն ամբողջական կազմով մեկնեց Բելգրադ, որտեղ մարտի 9-ին կմեկնարկի Եվրոպայի մեծահասակների առաջնությունը: Մեր ընտրանու գլխավոր մարզիչ Լեւոն Ջուլֆալակյանը օրերս Հայաստանի մարզական լրագրողների ֆեդերացիայի եւ ՀԱՕԿ-ի համատեղ նախաձեռնությամբ կազմակերպված հանդիպման ժամանակ հայտարարել էր այն ըմբիշների անունները, որոնք Սերբիայի մայրաքաղաքում ներկայացնելու են մեր երկիրը: Նրանք են.

Ռոման Ամոյան, Երեւան, 55 կգ քաշային կարգ
Արթուր Մկրտչյան, Երեւան, 60 կգ
Արամ Ջուլֆալակյան, Երեւան, 66 կգ
Արսեն Ջուլֆալակյան, Երեւան, 74 կգ
Հրաչ Հովհաննիսյան, Գյումրի, 84 կգ
Արթուր Ալեքսանյան, Գյումրի 96 կգ
Յուրի Պատրիկեեւ, Երեւան, 120 կգ:

Հիշեցնենք, որ FILA-ի որոշմամբ Եվրոպայի առաջնությունում օլիմպիական ուղեգրեր չեն խաղարկվում:

## Ադրբեջանն ու Վրաստանը ցանկանում են համատեղ կազմակերպել ֆուտբոլի «Եվրո 2020»-ը

Այդ նպատակով երկու երկրները պատրաստվում են համատեղ հայտ ներկայացնել ՈՒԵՖԱ: Այդպիսի մտադրության մասին Ադրբեջանի Միլի մեջլիսում ունեցած ելույթում հայտարարել է Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլին:



Հիշեցնենք, որ ՈՒԵՖԱ-ն կազմակերպիչ երկրի անունը որոշելու է 2014 թվականին: Առայժմ այդ իրավունքն ստանալու ամենահավանական թեկնածուներն են Թուրքիան, Հոլանդիան եւ Բելգիան:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹ

# Իսրայելում ապրել եմ 3 տարի, բայց հոգիս հրեական է

Կանանց միջազգային օրվա նախօրեին Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ (դիրիժոր՝ Էդ. Թոփչյան) հանդես եկավ ազգությամբ հրեա, ծնունդով Ռիգայից, 1974 թվականից գերմանաբնակ հանրահայտ թավջութակահար Ռամոն Յաֆֆեն: Նրա արվեստին ծանոթ հայաստանցի որոշ արվեստագետներ «Առավոտի» հետ զրույցում կատակեցին, թե բարձրակարգ երաժշտի հաջողության գրավականներից մեկը նրա բարետեսությունն է, ինչի շնորհիվ թավջութակահարի համերգների ունկնդիրների մեծ մասը գեղեցիկ սեռի ներկայացուցիչներ են:

Միշտ չէ, որ Հայաստան հյուրախաղի եկած հրեա երաժիշտները հանդես են գալիս իրենց ազգակցի ստեղծագործությամբ. թավջութակահարը հնչեցրեց կոմպոզիտոր Է. Բլոխի «Շելոմո» ստեղծագործությունը, որն ունի «Հրեական ռապսոդիա» ենթավերնագիրը: «Առավոտի» հետ զրույցում Ռամոն Յաֆֆեն ասաց, որ թեեւ առաջին անգամ է Հայաստանում, սակայն քաջածանոթ է մեր պատմությանն ու մշակույթին: «Հայերդ էլ մեզ նման՝ ցրված լինելով աշխարհով մեկ, ամեն գնով պահել եք ձեր մշակույթը: Ես գիտեմ դա ինչ է... Մասնակից լինելով հեղինակավոր փառատոների՝ շփվել եմ, բարեկամացել ու բարձր գնահատել հայ երաժիշտներին: Օրինակ, ավստրիական մի փառատոնում ինձ համար հայտնություն էր ջութակահար Աննուշ Նիկողոսյանը, Կիպրոսում՝ ալտահար Սամուել Բաղդասարյանը, Ֆինլանդիայում՝ ջութակահար Լեւոն Չիլինկիրյանը»:



Հարցին՝ ինչո՞ւ է հայ հանդիսատեսի համար ընտրել հատկապես հրեա կոմպոզիտորի ստեղծագործություն, մեր զրուցակիցը պատասխանեց հարցով. «Զուգահեռներ չե՞ք տեսնում հրեա եւ հայ դասական ստեղծագործողների երկերում»:

Դիտարկմանը՝ ի տարբերություն աշխարհում սփռված հայ կոմպոզիտորների, հրեաները ներկայացնում են տարբեր դպրոցներ, օրինակ, Ժակ Օֆֆենբախը՝ գերմանական, Մալլերը՝ ավստրիական եւ այլն, արվեստագետն ասաց. «Ես Իսրայելում ապրել եմ ընդամենը 3 տարի, բայց հոգիս, անկասկած, հրեական է: Համոզված եմ՝ նույնը ձեր նշած մյուս հրեա կոմպոզիտորների պարագայում է»:

Իսկ ինչո՞ւ չի ապրում ու ստեղծագործում հայրենիքում: Մեր զրուցակիցը նշեց, որ լայն գործունեություն ծավալելու համար Իսրայելը չափազանց փոքր է: Ռ. Յաֆֆեն հաստատեց մեզ հասած այն տեղեկությունը, թե ինքը հանրահայտ կիթառահար Պեդրո Բականի հետ հաճախ հանդես է գալիս ֆլամենկո ոճի երաժշտության կատարումներով:

1962-ին Ռիգայում ծնված երաժշտի համար նորություն չէր մարտի 8-ը, սակայն անակնկալ էր, երբ հայտնեցինք, թե Հայաստանում կանանց տոնը շարունակվում է մեկ ամիս: «Հայուհիներն արժանի են ոչ միայն միամսյակի, այլեւ հարատեւ տոնի, ախր, նրանք ուղղակի գեղեցկուհիներ են»,- ժպտալով ասաց թավջութակահարը:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

## Բեռլինում թուրքերն արգելել են ցուցահանդեսը

Երեկ «Արմատ» ակումբում Համբուրգի համալսարանի դոկտոր Աննա Մարի Բրաունը եւ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող, Վափրթալի համալսարանի ասպիրանտ Մանուշակ Մարկոսյանը ներկայացրին Հայոց ցեղասպանության մասին իրենց ուսումնասիրությունները: Դոկտոր Բրաունը Գերմանիայում զբաղվում է Հայոց ցեղասպանության եւ Արցախյան հակամարտության ուսումնասիրությամբ, ծանոթացել է հայկական ճարտարապետությանը, նկարիչների եւ գիտնականների գործերին եւ զարմացած է այն հանգամանքով, որ թուրքերն աչք են փակում Ցեղասպանության վրա:

«Կարեւոր է, որ գերմանացիներն իմանան Ցեղասպանության մասին: Մեր երկրում քիչ է խոսվում դրանից: Հայաստանը շրջապատված է մահմեդական երկրներով, այդ իսկ պատճառով քրիստոնեական մյուս երկրների աջակցությունն անհրաժեշտ է»,- նշեց տիկին Բրաունը, որը Մանուշակ Մարկոսյանի հետ Գերմանիայում կազմակերպել է Ցեղասպանության լուսանկարները ներկայացնող ցուցահանդեսներ: «Դրանք Ցեղասպանության ականատես, լուսանկարիչ Արմին Վեգների գործերն էին, որոնք նախկինում չէին ցուցադրվել»,- նշեց Մ. Մարկոսյանը: Նա հավելեց, որ վերջերս Բեռլինում արգելվել է Ցեղասպանության լուսանկարների մեկ այլ ցուցահանդես. «Գերմանացիները համարձակություն չունեն ցուցադրել, որովհետեւ թուրքերն ազդեցիկ են եւ արգելում են: Բացի այդ՝ հայկական համայնքն էլ թույլ է եւ մասնատված»,- ասաց պատմաբանը:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ